

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ընկերության անվանումը՝ «Արցախ ՀԷԿ» Բաց բաժնետիրական ընկերություն

Հասցեն՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25ա

հեռ. (+374 47) 953-542, (+374 47) 942-858

ֆաքս: (+374 47) 974-214

Էլ-Փոստ: artsakhhek@mail.ru

Ինտերնետային կայքը՝ www.artsakhhpp.com

Խորհրդի նախագահի ներածական խոսքը

1. Արդեն հինգ տարի է անցել «Արցախ ՀԷԿ» Բաց բաժնետիրական ընկերության կազմավորումից, որի ընթացքում Ընկերությունը կարողացել է շարունակական և հաջողված ծրագրերի իրականացման շնորհիվ ներդրողներին ապահովել հուսալի եկամուտներ:

Չեռաբերելով մեծ համբավ ինչպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում, այնպես էլ արտերկրում՝ Ընկերությունը էական ներդրում ունեցավ Արցախի էներգահամակարգի զարգացման, էներգետիկ անվտանգության, տնտեսական աճի և բնակչության զբաղվածության ապահովման հիմնահարցերի լուծմանը նպաստելու գործում:

Ընկերության արտադրական հզորությունների ընդլայնման արդեն իսկ մեկնարկած ռազմավարական ներդրումային ծրագրերը կոչված են ամբողջությամբ բավարարել Արցախում էլեկտրաէներգիայի նկատմամբ ներքին պահանջարկը, այնուհետև նախադրյալներ ստեղծել արտահանման համար:

Իր ողջ գործունեության ընթացքում Ընկերությանը հաջողվել է ավարտին հասցնել 4 փոքր ՀԷԿ-երի շինարարական աշխատանքները, ստեղծել նոր աշխատատեղեր, բացահայտել և իրացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի ոլորտում առկա ներուժը, ապահովել առաջանցիկ աճի տեմպեր:

Այսօր «Արցախ ՀԷԿ»-ը հանդիսանում է խոշոր և հեռանկարային ընկերություն, որը պատրաստակամ է լայնածավալ ներդրումային նախագծերի իրականացմանը: Ընկերությունն ունի ավելի քան 1200 բաժնետեր և անընդհատ կատարելագործում է իր կորպորատիվ կառավարման համակարգը:

2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համաձայն Ընկերության կանոնադրության և Կորպորատիվ Կառավարման Կանոնագրքի պահանջների, Ընկերությունը սահմանել է հետևյալ կորպորատիվ կառուցվածքը.


ա) Բաժնետերերի ընդհանուր ժողով,

բ) Տնօրենների խորհուրդ,

գ) Գլխավոր տնօրեն

դ) Վերստուգիչ հանձնաժողով

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը՝ բաժնետերերի ընդհանուր ժողովն է: Կառավարման մյուս մարմիններն են՝ տնօրենների խորհուրդը, որը կազմված է յոթ անդամներից: Տնօրենների խորհուրդը ընտրում է տնօրենների խորհրդի նախագահ և գլխավոր տնօրեն: Գլխավոր տնօրենը իր հրամանով նշանակում է տեխնիկական և ֆինանսական տնօրեններին, ինչպես նաև գլխավոր հաշվապահին:



Ընկերության վարչա-կազմակերպական կառուցվածքը մանրակրկիտ կարող էք ծանոթանալ Ընկերության ինտերնետային կայքում՝ www.artsakhpp.com:

Ընկերության նշանակալից բաժնետերերն են.

1. ԼՂՀ կառավարությունը, տիրապետում է 5 100 000 բաժնետոմս, որը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 47,89%-ը:
2. Ժողեֆ Ուղուրյանը, տիրապետում է 1,262,901 բաժնետոմս, որը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 11,86%-ը:
3. «Մ. Էներգոինվեստ» ՓԲԸ, տիրապետում է 1,193,692 բաժնետոմս, որը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 11,21%-ը:
4. «Զանգեզուրի Պղնձամուխրդենային կոմբինատ» ՓԲԸ, տիրապետում է 657 933 բաժնետոմս, որը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 6,18%-ը:
5. «Վ.Պ.Բ.Փ» ՓԲԸ, տիրապետում է 630 270 բաժնետոմս, որը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 5,92 %-ը:

3. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ (ԲԸԺ)

Ընկերության Տնօրենների Խորհրդի 2013թ. ապրիլի 29-ի նիստում ընդունվել է որոշում բաժնետերերի հերթական ընդհանուր տարեկան ժողով գումարելու մասին:

Ժողովը տեղի կունենա 2013թ. հունիսի 10-ին, ժամը 11:00-ին, ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում, Թումանյան 63 հասցեում: Ժողովին մասնակցել կարող են 2013թ-ի մայիսի 2-ի դրությամբ Ընկերության բաժնետերերի ռեեստրում հաշվառվող անձինք, որոնք համապատասխան կարգով կձանուցվեն Ընկերության կողմից: Խորհուրդը հաստատել է ժողովի օրակարգը, որն ընդգրկում է՝

1. Տարեկան հաշվետվությունների ներկայացում (գեկուցողներ - գլխավոր տնօրեն Վահրամ Բեգլարյան, տեխնիկական տնօրեն Արմեն Գասպարյան, ֆինանսական տնօրեն Ժան Հովհաննիսյան)
2. 2012թ. ընկերության ֆինանսական գործունեության վերաբերյալ Աուդիտորի եզրակացության ներկայացում (գեկուցող՝ «Ֆինտեխ Աուդիտ» ՓԲԸ ներկայացուցիչ Արամ Մաչանյան)
3. Ընկերության 2013թ. ֆինանսական գործունեության աուդիտորական կազմակերպության հաստատում (Ընկերության Խորհրդի կողմից մրցույթում հաղթող է ճանաչվել «Ֆինտեխ Աուդիտ» փակ բաժնետիրական ընկերությունը)
4. Տարեկան հաշվետվություններում արտացոլված տվյալների արժանահավատության վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը
5. Տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատում
6. Ընկերության 2012թ. գործունեության արդյունքներով շահույթի համամասնությունները հաստատելու մասին
7. Ընկերության 2012թ. գործունեության արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունում և տարեկան շահութաբաժինների չափի հաստատում
8. Ընկերության տնօրենների խորհրդի ընտրություն
9. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի ընտրություն
10. Ընկերության հաշվիչ հանձնաժողովի ընտրություն

Բաժնետերերը հնարավորություն են ունեցել ԲԸԺ-ին մասնակցել լիազորված ներկայացուցչի միջոցով:

Բաժնետերերը, Ընկերության կանոնադրության 12.14 կետի գ) ենթակետով սահմանված կարգով, քվեարկել են կումուլյատիվ քվեարկությամբ:

Տարեկան ԲԸԺ-ի օրակարգը, լիազորագրի ձևը, քվեարկության արդյունքները և նիստի արձանագրությունը հասանելի են Ընկերության ինտերնետային կայքում:

Ընկերության տարեկան ընդհանուր ժողովի ընթացքում, քվեաթերթիկների միջոցով ընտրվում է տնօրենների խորհրդի և վերստուգող հանձնաժողովի կազմը: Ընտրված տնօրենների խորհրդի լիազորությունները սահմանվում է մինչև հաջորդ տարեկան ընդհանուր ժողովը, իսկ վերստուգող հանձնաժողովի անդամների լիազորությունները սահմանվում է 3 տարի: Տնօրենների խորհրդի կազմի մեջ ընդգրկված նշանակալից թաժնետերերը տնօրենների խորհրդի անդամ ընտրվում են առանց քվեարկության:

4. ԽՈՐՀՈՒՐԴԸ

Խորհրդի գործառույթները

Կանոնագրքի 8-րդ հոդվածը և Ընկերության կանոնադրության 12.2-12.13 հոդվածները սահմանում են Խորհրդի բացառիկ և պատվիրակված իրավասությունները, որոնք հասանելի են <http://www.artsakhpp.com/am>:

Խորհրդի կազմը

30.04.2012թ. դրությամբ, Ընկերության Խորհուրդը բաղկացած է 7 անդամից, որոնցից 6 ոչ գործադիր են, 1 գործադիր.

ԽՈՐՀՈՒՐԴԸ					
h/h	Պաշտոնը և անունը	Գործադիր	Ոչ գործադիր	Անկախ	Խորհրդի անդամ է սկսած՝
1	Նախագահ՝ Լ.Ղ.Չ փոխվարչապետ,		+		25.05.2010թ.

	Ֆինանսների նախարար Սպարտակ Թևոյան				
2	Անդամ՝ «Արցախի ՀԷԿ» ԲԲԸ գլխավոր տնօրեն Վահրամ Բեգլարյան	+			25.05.2010թ.
3	Անդամ՝ «Արմավիսբանկ» ՓԲԸ վարկային վերլուծաբան Օհանջանյան Էմին		+	+	30.05.2011թ.
4	Անդամ՝ «Ամբեր կապիտալ» ՓԲԸ տնօրեն Արարյան Կարեն		+	+	30.04.2012թ.
5	Անդամ՝ ՀՀ Վերահսկիչ Պալատի առաջատար մասնագետ Հայկ Բեգլարյան		+	∞	30.05.2011թ.
6	Անդամ՝ Վարկային վերլուծաբան Բաֆֆի Բալյոզյան		+	+	30.04.2012թ.
7	Անդամ՝ «Զանգեզուր Մայնինգ» ՍՊԸ Տնօրեն Արման Հակոբյան		+	+	30.04.2012թ.

Խորհրդի նախագահի և անդամների համառոտ կենսագրությունները.

ՍՊԱՐՏԱԿ ԱՊԵՏՆԱԿԻ ԹԵՎՈՍՅԱՆ

Ծնվել է

1949 թթ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանում:

1964 թ. ավարտել է Խնուշինակի ութամյա դպրոցը,

1967 թ.՝ Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը, իսկ

1976 թ.՝ Երևանի պետական համալսարանի «Ֆինանսներ և վարկեր» ֆակուլտետը:

1970 - 1979 թթ. աշխատել է մարզային ֆինանսական բաժնում:

1979 - 1986 թթ. զբաղեցրել է Լեռնային Ղարաբաղի ագրոարդյունաբերական համալիրի
գլխավոր տնօրենի տեղակալի, իսկ

1986 - 1987 թթ. ԼՂԻՄ Ագրոարդի նախագահի առաջին տեղակալի պաշտոնները:

1987 - 1989 թթ. վարել է ագրոբանկի կառավարչի, իսկ

1989 - 1991 թթ. ԼՂ մարզային գործկոմի ֆինանսական բաժնի վարիչի պաշտոնները:

1992 - 1995 թթ. աշխատել է ԼՂՀ էկոնոմիկայի և ֆինանսների նախարարի պաշտոնում:

1995 - 1998 թթ. պաշտոնավարել է որպես ԼՂՀ առաջին փոխվարչապետ և էկոնոմիկայի
ու ֆինանսների նախարար:

1998 - 1999 թթ. զբաղեցրել է Ագրոբանկի կառավարչի պաշտոնը:

1999 թ. հուլիսին կրկին նշանակվել է ֆինանսների նախարար:

2002 թ. ԼՂՀ նախագահի հրամանագրով նշանակվել է ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի
նախարար

ԼՂՀ նախագահի 2007թ. սեպտեմբերի 25-ի հրամանագրով նշանակվել է ԼՂՀ ֆինանսների
նախարար:

ԼՂՀ նախագահի 2009թ. հունվարի 19-ի հրամանագրով նշանակվել է ԼՂՀ փոխվարչապետ:

Ամուսնացած է, ունի երեք զավակ:

ՀԱՅԿ ԲԱՐՍԵՂԻ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Ծնվել է 1980 թվականին Հայաստանի Հանրապետությունում, ք. Երևանում:

1997 թվականին ավարտել է Խ. Աբովյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցը:

2002 թվականին ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտը:

2002-2004 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

Աշխատել է «Ֆլեշ» ՍՊԸ-ում և «Արարատբանկ»- ՓԲԸ-ում:

2008 թվականից աշխատում է ՀՀ Վերահսկիչ Պալատում՝ որպես առաջատար մասնագետ:

ՌԱՖՖԻ ԲԱԼՅՈՉՅԱՆ

Ծնվել է 1983 թվականին

2002-2004 թվականներին սովորել է Ֆրանսիայում, IUT, Բիզնես Մենեջմենթի Ինստիտուտում ստացել 2 տարվա համալսարանական աստիճան մենեջմենթի ոլորտում

2005 թվականին փոխանակման ծրագրով սովորել է Կանադայում, CONCORDIA համալսարանում, ուսումնասիրել կորպորատիվ ֆինանսներ, միջազգային բիզնես իրավունք, մարքեթինգ

2004-2007 թվականներին ստացել է ֆինանսական շուկաների ոլորտում մագիստրոսի աստիճան Ֆրանսիայի CERAM Business School համալսարանում

Հունվար 2008-հուլիսի 2008 թվականը աշխատել է որպես սեփական կապիտալի հետազոտության, քիմիական և արդյունաբերական գազի վերլուծաբան NATIXIS-Արժեթղթեր, Փարիզում

2008-2010 թվականները աշխատել է NATIXIS-կապիտալ շուկաներ, Նյու Յորքում որպես վարկային համախմբման և վարկային վաճառքի առևտրի վերլուծաբան

ԱՐՄԱՆ ՄԱՔՍԻՄԻ ՀԱԿՈԲՅԱՆ

Ծնվել է 1978թ., Հայաստանի Հանրապետությունում , ք. Քաջարանում:

1995թ. ին ավարտել է Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցը

2002թ. –ին ԵՊՀ, իրավաբանական ֆակուլտետ, իրավագիտության բակալավր

2000թ-ից առայսօր «Կապանի մեքենաշինական գործարան» ԲԲԸ, տնօրենի տեղակալ

2004թ-ից առայսօր «Ձանգեզուր մայնինգ» ՍՊԸ տնօրեն

ԿԱՐԵՆ ԱՐԱԲՅԱՆ

Ծնվել է 1977 թվականին

1994-1995 թվականներին սովորել է Սանկտ-Պետերբուրգի Տեխնիկական Համալսարանում, Էներգետիկայի բաժնում, ապա տեղափոխվել Երևանի Պետական Ճարտարագիտական Համալսարանը

1995-1998 թվականները ավարտել է Երևանի Պետական Ճարտարագիտական համալսարանը, ստացել բակալավրի աստիճան

2008- առ այսօր սովորում է Մոսկվայի Բիզնես Դպրոցում, MBA

2004-2006 թվականները աշխատել է OU Going Ahead Շրջակա միջավայրի պահպանության գործակալությունում որպես ծրագրի խորհրդատու Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի համար

2006-2007 թվականները աշխատել է որպես ծրագրի խորհրդատու «Խնյաենք Էներգիան» միավորությունում

2008--առ այսօր աշխատում է որպես վերականգնվող էներգիայի ավագ փորձագետ «Կլիմայի փոփոխության միջամտությունը կենտրոնական և արևմտային Ասիայում» Ծրագրում և տեղական կոորդինատոր Հայաստանի Կիտոյի արձանագրության ծրագրերի իրականացման աջակցությանն ծրագրում

11/2010-12/2010 թվականին աշխատել է որպես ծրագրի փորձագետ «CDM պոտենցիալի գնահատումը Հայաստանում» ԵԱՀԿ-ի ֆինանսավորած ծրագրում

09/2010--առ այսօր աշխատում է Միջազգային Ֆինանսներ Կորպորացիայի Արևելյան Եվրոպայի և կենտրոնական Ասիայի Ծրագրում որպես վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետության քաղաքականության փորձագետ

08/2010 թվականին աշխատել է որպես կարճաժամկետ խորհրդատու Սայական Զարգացման Բանկի Մշտական Առաքելություն Հայաստանում

01/2011 թվականին աշխատել է որպես տեղական փորձագետ RAMBOLL Danmark A/S-ում

12/2010 թվականին աշխատել է որպես խորհրդատու ՄԱԿ-ի շրջանակներում Կլիմայի Փոփոխության վերաբերյալ համագումարմանը Գերմանիայում

Ներկայումս աշխատում է որպես ծրագրի փորձագետ, մենեջեր և էներգիայի արդյունավետության խորհրդատու Energocor ՍՊԸ-ում:

ԷՄԻՆ ՌՈՒԲԵՆԻ ՕՅԱՆՁԱՆՅԱՆ

Ծնվել է 1983 թ.-ին Հայաստանի Հանրապետությունում, ք. Էջմիածին:

2001թ.-ին ավարտել է Էջմիածին քաղաքի Մովսես Խորենացու անվան թիվ 2 միջնակարգ դպրոցը

2007թ.-ին ավարտել է Հայաստանում Ֆրանսական Համալսարանի Առևտրի և մարքեթինգի ֆակուլտետը,

2006-2007 թթ. աշխատել է Հայաստանի Էկոմենիկ Եկեղեցական Ֆոնդ ՈւՎԿ ՍՊԸ-ում, որպես վարկային մասնագետ,

2008թ.-ից առ այսօր աշխատում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում՝ որպես վարկային վերլուծաբան: **ՎԱՀՐԱՄ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԲԵԳԼԱՐՅԱՆ**

Ծնվել է 1976 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում:

1993 թվականին ավարտել է Ստեփանակերտի թիվ 8 դպրոցը:

1993-1998 թվականները ավարտել է Արցախի պետական համալսարանը, ֆինանսներ և վարկ մասնագիտությամբ:

1993-1994 թվականները անցավ ծառայություն ԼՂՀ պաշտպանության բանակում:

1996 թվականից ընդունվել է ԼՂՀ զինվորական դատախազություն:

1997թ. ընդունվել է «Ագրոբանկ»-ի մասնաճյուղ, տնտեսագետի պաշտոնում:

1998 թվականին «Ագրոբանկ»-ի մասնաճյուղում, շարունակելով իր աշխատանքը, նշանակվել է գլխավոր տնտեսագետի պաշտոնի, այնուհետև 1999թ. նշանակվեց փոխկարավարիչի պաշտոնի:

2004-2005 թթ. աշխատել է «Ղարաբաղ Գուլը» ՓԲԸ-ում

2008 թվականին նշանակվել է «Տեխնոշին» ՍՊԸ-ի տնօրեն:

2009 թվականից առ այսօր աշխատում է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ գլխավոր տնօրենի պաշտոնում:

Ընկերության վերստուգող հանձնաժողովը կազմված է երեք անդամներից:

Վերստուգող հանձնաժողովի կազմը հետևյալն է.

1. Պետրոսյան Արթուր
2. Պատվականյան Արթուր
3. Ներսիսյան Արթուր

Խորհրդի գործունեությունը

2012թ. տարվա ընթացքում, Խորհուրդը գումարել է 5 նիստ, որից 2 հեռակա քվեարկությամբ:

Խորհրդի անդամների մասնակցությունը Խորհրդի նիստերին ունի հետևյալ պատկերը.

h/h	Պաշտոն և անուն	Նիստերի մասնակցությունը անձամբ	Նիստերի մասնակցությունը հեռակա կարգով	Նիստերի քանակը, որոնց պետք է մասնակցեր
1	Նախագահ՝ Մպարտակ Թևոսյան	3	2	5
2	Անդամ՝ Վահրամ Բեգլարյան	3	2	5
3	Անդամ՝ Օհանջանյան Էմին	1	2	5
4	Անդամ՝ Արաբյան Կարեն	3	2	5
5	Անդամ՝ Հայկ Բեգլարյան	1	1	5
6	Անդամ՝ Լաֆֆի Բայրոզյան	2	3	5
7	Անդամ՝ Արման Հակոբյան	1	3	5

Խորհրդի աշխատանքի գնահատումը

Խորհուրդը չի ընդունել գնահատման քաղաքականություն:

5. ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Խորհուրդը չի ստեղծել հանձնաժողովներ

6. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Գլխավոր տնօրեն՝ Վահրամ Վլադիմիրի Բեգլարյան

Համառոտ կենսագրությունը ներկայացված է սույն հայտարարագրի չորրորդ մասում:

Ընկերության գլխավոր տնօրենի կանոնակարգը մշակված է 2010թ. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի, Ընկերության կանոնադրության պահանջներին համապատասխան և կարգավորում է Ընկերության Գլխավոր տնօրենի գործունեությունը:

Գլխավոր հաշվապահ՝ Արայիկ Դավթյան

Տեխնիկական տնօրեն՝ Արմեն Գասպարյան

Ֆինանսական տնօրեն՝ Ժան Հովհաննիսյան

7. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Ընկերությունում ներքին աուդիտն իրականացնող անձ չի ընտրվել:

8. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ընկերության կորպորատիվ քարտուղարն է Դմիտրի Բեցկովը, ով նշանակվել է Խորհրդի 2011թ. փետրվարի 2-ի թիվ 1-2011/04 որոշմամբ:

Ընկերության կորպորատիվ քարտուղարը իր գործառույթներն իրականացնում է համաձայն Կանոնագրքի 22-րդ հոդվածի:

9. ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձ է նշանակվել ,Ֆինտելիս Աուդիտե ՓԲԸ, որը արտաքին աուդիտն իրականացնող անձի պարտականությունները իրականացնում է 2012թ.:

Արտաքին աուդիտն իրականացնող անձի և Ընկերության հարաբերությունները կարգավորվում են համաձայն Կանոնագրքի 28-րդ հոդվածի:

Համաձայն Կանոնագրքի 28-րդ հոդվածի, Ընկերությունը ներդրել է չափորոշիչներ՝ որոշելու արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախությունը ընկերությունից:

10. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընկերության տարեկան հաշվետվությունը ներկայացվել և հաստատվել է Բաժնետերերի ընդհանուր ժողովում՝ 10.06.2013թ.:

Տարեկան հաշվետվությունը պարունակում է Կանոնագրքի 23-րդ հոդվածով սահմանված ողջ տեղեկությունները և տեղադրված է Ընկերության ինտերնետային կայքում:

Խորհրդի նախագահ՝

Սպարտակ Թևոսյան

Գլխավոր տնօրեն՝

Վահրամ Բեգլարյան

Հավելված 2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ – «Հետևիք կամ բացատրիր»

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրը հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի (ԲԸԺ) իրավասությունները և բաժնետերերի իրավունքները			
1.	Ընկերության կանոնադրությունը նախատեսում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում հաղորդակցվել ԲԸԺ-ից առաջ և քննարկել քվեարկության հարցերը:	Ոչ	Ներկայումս Ընկերության կանոնադրությունը հստակ ընթացակարգեր չի պարունակում, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում հաղորդակցվել ԲԸԺ-ից առաջ և քննարկել քվեարկության հարցերը, սակայն նրանք փաստացի հնարավորություն ունեն քննարկել ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին տրամադրվող և ժողովին վերաբերվող տեղեկությունները և նյութերը:
2.	ԲԸԺ-ի օրակարգը և համապատասխան այլ փաստաթղթերը բաժնետերերը ստացել են ԲԸԺ-ից առնվազն 21 օր առաջ:	Այո	Համաձայն Ընկերության կանոնադրության ԲԸԺ գումարման օրը և ժողովի օրակարգը հրապարակվում է ժողովի գումարման օրվանից առնվազն 30 օր առաջ:
3.	ԲԸԺ-ի օրակարգին ներառում է քվեարկության դրվելիք հարցերի վերաբերյալ որոշումների նախագծերը, ինչպես նաև Խորհրդի կողմից ԲԸԺ-ի հաստատմանը ներկայացված աուդիտն իրականացնող անձի անունը:	Ոչ	Քվեարկության դրվելիք հարցերի վերաբերյալ որոշումների նախագծերն օրակարգում չեն ներառվում, բացի Խորհրդի անդամների ընտրության դեպքի: Աուդիտն իրականացնող անձի անունը ներկայացվում է ԲԸԺ-ի հաստատմանը: Նախատեսվում է այսուհետ որոշումների նախագծերը հրապարակել Ընկերության ինտերնետային կայքում:
4.	Ընկերության կանոնադրությունը սահմանում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում քվեարկել հեռակա կարգով (օր. էլեկտրոնային քվեարկությամբ):	Ոչ	Չնայած որ Ընկերության կանոնադրության 9.10 հոդվածում սահմանում են դրույթներ, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում քվեարկել հեռակա կարգով, այդուհանդերձ դրանք դեռ չեն պարունակում սպառիչ ընթացակարգեր, քանի որ դրանց գործնական անհրաժեշտությունը չի եղել:
5.	Ընկերության կանոնադրությունը սահմանում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին	Ոչ	Ընկերության կանոնադրությունը բաժնետերերին հնարավորություն է ընձեռում ժողովին մասնակցել լիազորված ներկայացուցչի միջոցով

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	հնարավորություն են ընձեռում նշանակել ներկայացուցիչ:		և գործնականում բաժնետերերը կարող են օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակել լիազորված ներկայացուցիչ, սակայն կանոնադրությամբ հստակ ընթացակարգեր սահմանված չեն: Նախատեսվում է 2014թ.-ին այս մասով կանոնադրությունում կատարել որոշ փոփոխություններ
6.	Արդյոք բաժնետերերը ԲԸԺ-ում քվեարկում են քվեաթերթիկների միջոցով: (Այս կարգը կարող է չգործել միայն մեկ բաժնետեր ունեցող ընկերությունների դեպքում):	Այո	
7.	Արդյոք բաժնետերերը իրավունք ունեն հարցեր տալու ժողովի գումարումից մինչև 10 օր առաջ:	Այո	Ժողովի օրակարգը հրապարակելիս Ընկերությունը նշում է հարցեր տալու բաժնետերերի իրավունքի մասին և, ըստ Ընկերությունում ձևավորված ավանդույթի, խրախուսում է Ընկերության և բաժնետերերի երկխոսությունը: Միաժամանակ ընկերության կանոնակարգերում այս առումով նախատեսվում են լրացուցիչ հստակեցումներ 2014թ.-ին:
8.	Արդյոք Խորհուրդը ժողովի ժամանակ պատասխանել է բաժնետերերի հարցերին:	Այո	Ընկերության կանոնակարգերում այս առումով նախատեսվում են լրացուցիչ հստակեցումներ 2014թ.-ին:
9.	Արդյոք բաժնետերերը իրավունք ունեն հարցեր տալու ժողովի ժամանակ:	Այո	Ընկերության կանոնակարգերում այս առումով նախատեսվում են լրացուցիչ հստակեցումներ 2014թ.-ին:
10.	Արդյոք Խորհուրդը պատասխանել է առաջադրված բոլոր հարցերին:	Այո	Ընկերության կանոնակարգերում այս առումով նախատեսվում են լրացուցիչ հստակեցումներ 2014թ.-ին:
Շահութաբաժինների վճարման քաղաքականությունը			
11.	Ընկերությունը ունի շահութաբաժինների վճարման քաղաքականություն, որը մշակվել է Խորհուրդի կողմից, հաստատվել է ԲԸԺ-ում և հրապարակվել է Ընկերության ինտերնետային կայքում:	Ոչ	Ընկերությունը ԲԸԺ կողմից հաստատված շահութաբաժինների վճարման քաղաքականություն չունի: Այնուամենայնիվ, 2010թ.-ից մինչ այսօր յուրաքանչյուր տարվա համար փաստացի վճարել է շահութաբաժիններ: Ընկերության ինտերնետային կայքում

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
			հրապարակվում է շահութաբաժինների վճարման ընդհանուր գումարը, մեկ բաժնետոմսին ընկած շահութաբաժնի չափը և վճարման ժամկետները: Նախատեսվում է շահութաբաժնի վճարման քաղաքականության մշակում մինչև 2014 թվականի ավարտը:
12.	Շահութաբաժինների վճարման քաղաքականությունը ներառում է վճարվելիք շահութաբաժնի նվազագույն գործակիցը (payout ratio):	Ոչ	Շահութաբաժինների վճարման նվազագույն գործակից սահմանված չէ, քանի որ այդպիսի պահանջ չի առաջացել: Այնուամենայնիվ Ընկերությունը նախատեսում է սահմանել այդ գործակիցը շահութաբաժինների վճարման քաղաքականությամբ:
Խորհուրդը			
13.	Ընկերությունը հիմնադրել է հստակ պարտականություններով և գործառույթներով օժտված խորհուրդ, որի մասին հրապարակված է ընկերության ինտերնետային կայքում:	Ոչ	Ընկերության խորհրդի իրավասությունները և պարտականությունները սահմանված են ընկերության կանոնադրությամբ, ինչպես նաև Ընկերության խորհրդի գործունեության կանոնակարգով: Հաշվի առնելով կորպորատիվ կառավարման կանոնագրքի դրույթները, ներկայումս վերանայվում են Ընկերության խորհրդի իրավասությունները և պարտականությունները: Խորհրդի գործառույթները ընկերության ինտերնետային կայքում հրապարակված չեն, սակայն նախատեսվում է հրապարակել 2014թ. ընթացքում:
14.	Արդյոք Խորհուրդը կազմում է հաշվետվություն Կանոնագրքի դրույթներին Ընկերության հետևելու վերաբերյալ	Այո	
15.	Արդյոք Խորհուրդը նշանակում և ազատում է գործադիր մարմնի ղեկավարին, ինչպես նաև ձևավորում է կոլեգիալ գործադիր մարմին (այդպիսին նախատեսված լինելու դեպքում), նշանակում և	Այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	ազատում դրա անդամներին		
16.	Արդյոք Խորհրդում ոչ գործադիր անդամները կազմում են մեծամասնություն, և արդյոք նրանցից առնվազն երկուսը անկախ են:	Ոչ	Ընկերության խորհրդը բաղկացած է 7 (յոթ) անդամից, որից 1 (մեկ) անձն է ներկայացնում գործադիր մարմինը: Խորհրդի կազմում ընդգրկված են նշանակալից սեփականատերերի ներկայուցիչները: Խորհուրդն անկախ անդամներ չունի:
17.	Խորհրդի հանձնաժողովները տարեկան մեկ անգամ անցկացնում են Ընկերության ներքին կորպորատիվ փաստաթղթերի (կանոնադրություն, կանոնակարգեր և այլ)՝ իրենց իրավասության ոլորտին վերաբերվող դրույթների փորձաքննություն և համապատասխան փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ են ներկայացնում խորհրդին:	Ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չունի, սակայն խորհուրդը, ըստ անհրաժեշտության, վերանայում է Ընկերության կորպորատիվ փաստաթղթերը: Միաժամանակ նախատեսում է մինչև 2013թ. ավարտը ձևավորել աուդիտի հանձնաժողով:
18.	Խորհրդի հանձնաժողովները պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում խորհրդին: Հանձնաժողովները այդպիսի հաշվետվություն են ներկայացնում յուրաքանչյուր նիստից հետո՝ պատեհ ժամկետում: Հանձնաժողովների նիստերը պետք է նախորդեն Խորհրդի հերթական նիստերին:	Ոչ	Խորհուրդը դեռ հանձնաժողովներ չունի:
19.	Խորհրդի հանձնաժողովների անդամները պետք է մասնակցեն հանձնաժողովի գործունեությանը և աշխատանքներին և ներկա գտնվեն բոլոր նիստերին,	Ոչ	Խորհուրդը դեռ հանձնաժողովներ չունի:
Խորհրդի անդամների նշանակումը			
20.	Խորհրդի անդամների թեկնածությունների առաջադրումը ԲԸԺ-ին զուգակցված է առաջադրված թեկնածուի պաշտոնի նկարագրով և համառոտ	Ոչ	Խորհրդի անդամների թեկնածությունների առաջադրումը ԲԸԺ-ին չի զուգակցվում առաջադրված թեկնածուի և համառոտ կենսագրականով: Խորհրդի անդամների պաշտոնի նկարագրերը,

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	Կենսագրականով, որտեղ շարադրված են ստանձնելիք պարտականությունները, գործառույթները և կենսագրական տվյալները:		պարտականությունները և գործառույթները չեն շարադրվում: Նախատեսվում է կատարել մինչև 2013թ.-ի ավարտը:
21.	Խորհրդի անդամների առաջադրված թեկնածուների պաշտոնի նկարագիրը և համառոտ կենսագրականները հրապարակվել էն Ընկերության ինտերնետային կայքում՝ ԲԸԺ-ից առնվազն 30 օր առաջ:	Ոչ	Խորհրդի անդամների պաշտոնի նկարագրերը սահմանելուց հետո Ընկերությունը դրանք մշտապես կհրապարակի իր ինտերնետային կայքում:
Խորհուրդ. Գործունեության մոնիթորինգ			
22.	Խորհուրդը, համաձայն գնահատման քաղաքականության, դիտարկում է գործադիր մարմնի գործունեությունը:	Ոչ	Ընկերությունը չի մշակել գործադիր մարմնի գործունեության գնահատման քաղաքականություն: Նախատեսվում է մշակել մինչև 2014թ.-ի ավարտը:
23.	Խորհուրդն իրականացնում է իր գործունեության արդյունավետության տարեկան գնահատում՝ համաձայն հաստատված գնահատման քաղաքականության:	Ոչ	Նախատեսվում է իրականացնել մինչև 2013թ.-ի ավարտը:
Խորհրդի նիստերի հաճախելիությունը			
24.	Խորհրդի նիստերին խորհրդի անդամների մասնակցության մասին տվյալները ներառված են ԿԿ Հայտարարագրի նկարագրական մասում և/կամ ընկերության տարեկան հաշվետվությունում:	Այո	ԿԿ Հայտարարագրի նկարագրական մասում ներառված են: ԿԿ Հայտարարագիրը կներառվի նաև տարեկան հաշվետվությունում:
Խորհրդի անդամների վերաբերյալ տվյալները			
25.	Ինչպես պահանջվում է Կանոնագրքով, տարեկան հաշվետվությունը և/կամ ԿԿ հայտարարագրի	Այո	ԿԿ Հայտարարագրի նկարագրական մասում խորհրդի անդամների մասին տեղեկությունները առկա են: ԿԿ Հայտարարագիրը

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	Նկարագրական մասը մանրամասն տեղեկություններ է պարունակում խորհրդի անդամների մասին:		կներառվի նաև տարեկան հաշվետվությունում:
Խորհրդի նիստերի տարեկան պլանը			
26.	Ցուցակված ընկերությունների և ՊԸ-ների խորհրդի նիստերը պետք է հրավիրվեն նվազագույնը եռամսյակը մեկ անգամ:	Այո	Գործնականում նիստը հրավիրվում է առնվազն եռամսյակը մեկ անգամ:
27.	Խորհուրդի նիստերը գումարվում են համաձայն հաստատված տարեկան պլանի: Խորհրդի նիստերի օրակարգը և դրան ուղեկցող փաստաթղթերը խորհրդի անդամներին է ուղարկվում նիստի օրվանից առնվազն 10 օր առաջ:	Ոչ	Նիստերի օրակարգը և դրան ուղեկցող փաստաթղթերը խորհրդի անդամներին նիստի օրվանից առնվազն 10 օր առաջ չեն ուղարկվում: Նախատեսվում է 2014թ.ին մշակել խորհրդի նիստերի տարեկան պլան, ինչպես նաև խորհրդի գործունեության կանոնակարգում սահմանել փաստաթղթերը խորհրդին ներակայցնելու ժամկետները:
Խորհրդի նախագահը			
28.	Խորհրդի նախագահի և գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնները չեն համատեղվում:	Այո	
29.	Ընկերության կանոնադրությամբ հստակ տարանջատված են խորհրդի նախագահի և գլխավոր գործադիր տնօրենի իրավասությունները:	Այո	Ընկերության Խորհրդի նախագահի իրավասությունները սահմանվում են Ընկերության կանոնադրության 9.14 հոդվածով: Գլխավոր տնօրենի իրավասությունները սահմանվում են կանոնադրության 9.15 հոդվածով:
30.	Խորհրդի նախագահը պատասխանատու է, որպեսզի խորհրդի նորընտիր անդամները իրենց պաշտոնավարման սկզբում պատշաճ ծանուցվեն ընկերության և իրենց պարտականությունների մասին: Ընկերությունն ունի խորհրդի անդամների համար նախատեսված ուսուցման ծրագրեր:	Ոչ	Այս հարցերի լուծումները կքննարկվեն խորհրդի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի վերանայման ընթացքում:
Խորհրդի անդամների գործունեության վնասների ապահովագրումը և նրանց ազատումը պատասխանատվությունից			

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
31.	Ընկերության կանոնադրությունը դրույթներ է պարունակում խորհրդի անդամներին այն վնասների փոխհատուցումից ազատելու վերաբերյալ, որոնք վրա են հասել նրանց պաշտոնական պարտականությունների իրականացման հետևանքով: Ընկերությունը ապահովագրվել է խորհրդի անդամների գործունեության վնասների դիսկից:	Ոչ	Ընկերության կանոնադրությամբ խորհրդի անդամներին վնասների փոխհատուցումից ազատելու վերաբերյալ դրույթներ նախատեսված չեն: Ապահովագրություն առայժմ չենք նախատեսում ֆինանսական նկատառումներով:
Աուդիտի հանձնաժողով			
32.	Ընկերությունները պարտավոր են ստեղծել խորհրդի ոչ-գործադիր անդամներից բաղկացած աուդիտի հանձնաժողով, որտեղ մեծամասնությունը, ինչպես նաև հանձնաժողովի նախագահը պետք է լինեն անկախ:	Ոչ	Ընկերությունը չունի աուդիտի հանձնաժողով, սակայն Ընկերությունում ձևավորվել է աուդիտի աշխատանքային խումբ, որտեղ ընգրկված է Ընկերության նախագահը:
33.	Աուդիտի հանձնաժողովի բոլոր անդամները համապատասխան որակավորում ունեն ֆինանսների, հաշվապահության, աուդիտի և ներքին հսկողության հարցերում:	Այո	Աուդիտի աշխատանքային խմբի բոլոր անդամները ունեն համապատասխան որակավորում, սակայն աուդիտի հանձնաժողովի ստեղծման համար պահանջվում է լրացուցիչ որակավորում:
34.	Աուդիտի հանձնաժողովը հետևում է ընկերության ֆինանսական հաշվետվությունների ամբողջականությանը և ընկերության ֆինանսական գործունեությանը վերաբերվող հայտարարություններին՝ դիտարկելով դրանցում տեղ գտած կարևոր պնդումները ֆինանսական հաշվետվողականության վերաբերյալ, վերանայում եռամսյակային և տարեկան հաշվետվությունները և	Ոչ	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	Խորհրդին ու ԲԸԺ-ին առաջարկություններ կայացնում դրանց հաստատման վերաբերյալ:		
35.	Աուդիտի հանձնաժողովը նվազագույնը տարեկան մեկ անգամ հանդիպում է արտաքին աուդիտն իրականացնող անձին՝ քննարկելու աուդիտի հետ կապված հարցերը:	Ոչ	
36.	Աուդիտի հանձնաժողովը պատասխանատու է վերանայելու ընկերության ներքին վերահսկողության, ներքին աուդիտի, ինչպես նաև ռիսկերի կառավարման համակարգերը:	Ոչ	
37.	Աուդիտի հանձնաժողովը պատասխանատու է արտաքին աուդիտն իրականացնող անձի ընտրության, նրա աշխատանքի պայմանների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել խորհրդին, դրանք՝ ԲԸԺ-ի ընդհանուր ժողովի քննարկմանը և վերջնական հաստատմանը ներկայացնելու համար:	Այո	
38.	Աուդիտի հանձնաժողովը մշակել է արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախության չափորոշիչներ	Ոչ	Աուդիտի աշխատանքային խումբը մշակել է համապատասխան չափորոշիչներ, որոնք ընդունվել են ԲԸԺ-ի կողմից հետևյալ վերնագրով (Աուդիտի հանձնաժողովի մասին կանոնակարգ):
39.	Աուդիտի հանձնաժողովը, դիտարկել է արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախությունը՝ համաձայն հաստատված չափորոշիչների, և արդյունքները ներառնվել են տարեկան հաշվետվությունում:	Ոչ	
40.	Աուդիտի հանձնաժողովը պահում է իր նիստերի	Այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	արձանագրությունները:		
Ներքին աուդիտ			
41.	Ներքին աուդիտն իրականացնող անձը նշանակվում և ազատվում է Աուդիտի հանձնաժողովի համաձայնությամբ:	Ոչ	
42.	Ներքին աուդիտն իրականացնող անձը անմիջականորեն հաշվետու է Աուդիտի հանձնաժողովին:	Ոչ	
43.	Ներքին աուդիտն իրականացնող անձը իր գործունեությունն իրականացնում է համաձայն Աուդիտի հանձնաժողովի կողմից հաստատված տարեկան պլանի և այդ մասին պարբերաբար զեկուցում է Աուդիտի հանձնաժողովին:	Ոչ	
44.	Ներքին աուդիտն իրականացնող անձը պատասխանատու է ներքին հսկողության լիարժեքության դիտարկման և ներքին հսկողության ընթացակարգերի իրականացման համար	Ոչ	
Արտաքին աուդիտ			
45.	Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձը չպետք է մատուցի Կանոնագրքի 28-րդ կետի 2) ենթակետի ոչ-աուդիտորական ծառայությունները:	Այո	Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի կողմից ոչ-աուդիտորական ծառայություններ Ընկերությանը չեն մատուցվում:
46.	Արտաքին աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափը բացահայտվել և հաստատվել է ԲԸԺ-ում:	Ոչ	Համաձայն Ընկերության կանոնադրության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը հաստատում է ժողովը, վարձատրության չափը որոշում է խորհուրդը:
47.	Ընկերությունը ունի արտաքին աուդիտն	Այո	Ընկերությունը 2-3 տարի մեկ կատարում է արտաքին աուդիտի

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	իրականացնող անձի ռոտացիայի քաղաքականություն:		ռոտացիա:
Խորհրդի այլ հանձնաժողովները			
48.	Ընկերությունը ստեղծել է Խորհրդի անդամներից բաղկացած այլ հանձնաժողովներ	Ոչ	Այլ խորհրդի հանձնաժողովները դեռևս ձևավորված չեն:
49.	Խորհրդի բոլոր հանձնաժողովները գործում են համաձայն իրենց կանոնակարգերի, որտեղ սահմանվում են դրանց գործառույթները, դերն ու պարտականությունները:	Ոչ	Տես 48 կետի մեկնաբանությունը:
50.	Բանկի Խորհուրդը պետք է ստեղծի դիսկերի կառավարման, ռազմավարական պլանավորման և ներդրումային հանձնաժողովներ՝ օժտված համապատասխան իրավասություններով:	Ոչ	
51.	Խորհրդի հանձնաժողովները պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում խորհրդին: Հանձնաժողովները այդպիսի հաշվետվություն են ներկայացնում յուրաքանչյուր նիստից հետո՝ պատեի ժամկետում: Հանձնաժողովների նիստերը պետք է նախորդեն Խորհրդի հերթական նիստերին:	Ոչ	
52.	Խորհրդի հանձնաժողովների անդամները պետք է մասնակցեն հանձնաժողովի գործունեությանը և աշխատանքներին և ներկա գտնվեն բոլոր նիստերին:	Ոչ	
Կորպորատիվ քարտուղար			

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
53.	<p>Ընկերության խորհուրդը նշանակել է կորպորատիվ քարտուղար, որը հաշվետու է խորհրդին: Կորպորատիվ քարտուղարը աջակցում է խորհրդի նիստերի կազմակերպմանը, մասնավորապես նիստերի պլանավորմանը, հրավիրմանը, անցկացմանը և արձանագրության վարմանը՝ համաձայն օրենքների և ընկերության ընթացակարգերի: Խորհուրդը սահմանում է կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը, ինչպես նաև նրա վարձատրության չափը:</p>	Այո	<p>Ընկերության կորպորատիվ քարտուղարն է Դմիտրի Բեցկովը, ով նշանակվել է Խորհրդի 2011թ. փետրվարի 2-ի թիվ 1-2011/04 որոշմամբ:</p>
54.	<p>Կորպորատիվ քարտուղարը աջակցում է Խորհրդի նախագահին՝ դիտարկելու կորպորատիվ կառավարման ոլորտի ՀՀ օրենսդրության, Կանոնագրքի, Ընկերության կանոնադրության և կանոնակարգերի պահանջները Ընկերության կողմից կատարելը:</p>	Այո	
Տեղեկատվության բացահայտումը և թափանցիկությունը			
Տարեկան հաշվետվություն			
55.	<p>Ընկերությունը կազմել է հաշվետու տարվա տարեկան հաշվետվությունը, որը ներկայացվել է բաժնետերերի հաստատմանը և հրապարակվել է ընկերության ինտերնետային կայքում:</p>	Այո	
56.	<p>Տարեկան հաշվետվությունը պարունակում է ֆինանսական հաշվետվություն՝ կազմված ֆինանսական հաշվետվությունների միջազգային</p>	Այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	ստանդարտներին համապատասխան:		
57.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է Ընկերության շահառուներին հասցեագրված տեղեկատվությունը, որը հնարավորություն է տալիս գնահատել ընկերության ներդրումը տնտեսական կայունության, սոցիալական բարեկեցության և բնապահպանական անվտանգության ապահովման գործում:	Ոչ	Թեև այս հարցի վերաբերյալ Ընկերության տարեկան հաշվետվությունը պարունակում է որոշակի տեղեկատվություն, սակայն այն դեռ լիարժեք չէ: Առաջիկայում ընկերությունը նախատեսում է ունենալ մշակված քաղաքականություն տնտեսական կայունության, սոցիալական բարեկեցության և բնապահպանական անվտանգության ապահովման ոլորտներում և ընդգրկել դրանց կատարողականի վերաբերյալ տեղեկությունները տարեկան հաշվետվություններում:
58.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է տեղեկություն Ընկերության վարքագծի կանոնների վերաբերյալ և հղում ընկերության ինտերնետային կայքին, որտեղ այն տեղադրված է:	Ոչ	Նախատեսվում է մշակել մինչև 2014թ.-ի ավարտը:
59.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է ԿԿ Հայտարարագիրը Կանոնագրքին հետևելու և/կամ մանրամասն բացատրությունը՝ չհետևելու և դրա պատճառների մասին	Ոչ	2012թվականի տարեկան հաշվետվությունը չէր պարունակում տեղեկություն ԿԿ հայտարարագրի Կանոնագրքին հետևելու մասին: Նախատեսվում է 2013 թվականի տարեկան հաշվետվությունում:
60.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ Ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ կնքված մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքների մասին, որոնց արժեքը գերազանցում է Ընկերության ակտիվների արժեքի 2 տոկոսը՝ մանրամասն ներկայացնելով այդպիսի գործարքների հաստատման կամ վավերացման համար Ընկերության կողմից ընդունված քաղաքականությունը և ընթացակարգերը:	Ոչ	Ընկերությունը չունի այդպիսի գործարքների հաստատման կամ բացահայտման համար Ընկերության կողմից առանձին ընդունված քաղաքականություն և ընթացակարգեր: Նախատեսվում է դրանք մշակել մինչև 2014թ.-ի ավարտը: Առայժմ այդպիսի գործարքների կնքումը կատարվում է ՀՀ օրենսդրության և Ընկերության կանոնադրությամբ սահմանված նորմերի շրջանակներում, իսկ համապատասխան տեղեկությունները բացահայտվում են Ընկերության կողմից ՀՀ Կենտրոնական բանկին և Բորսային ներկայացված հաշվետվություններում՝ համաձայն ՀՀ

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	<p>Ընկերության և փոխկապակցված անձանց միջև փոխկապակցված այդպիսի գործարքների առկայության դեպքում նաև պետք է ներկայացնել Ընկերության գործարքներում փոխկապակցված անձանց գործարքների համամասնությունը, փոխկապակցված անձանց յուրաքանչյուր խմբի գործարքները, փոխկապակցված անձանց գործարքների պայմանների արդարության գնահատումը: Ընկերության և փոխկապակցված անձանց միջև այդպիսի գործարքների բացակայության դեպքում պետք է հստակ նշվի այդ մասին:</p>		<p>Կենտրոնական բանկի 4/04 կանոնակարգի:</p>
61.	<p>Տարեկան հաշվետվությունը ներառում է արտաքին աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը:</p>	Այո	
62.	<p>Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության նշանակալից (10%-ից ավելի) բաժնետոմսերին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետող բաժնետերերի ցուցակը:</p>	Այո	
63.	<p>Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության փոխկապակցված անձանց ցուցակը և փոխկապակցված անձանց հետ կնքված այն գործարքների ցանկը, որոնց արժեքը գերազանցում է Ընկերության ակտիվների արժեքի 2 տոկոսը:</p>	Այո	
64.	<p>Տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի անդամների, այդ թվում անկախ անդամների անունները և հակիրճ կենսագրությունը, այդ թվում</p>	Ոչ	<p>Թեև այս հարցի վերաբերյալ Ընկերության տարեկան հաշվետվությունը պարունակում է որոշակի տեղեկատվություն, սակայն այն դեռ լիարժեք չէ:</p>

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	տարվա ընթացքում հրաժարական տված և պաշտոնից հեռացված խորհրդի անդամների անունները, տարվա ընթացքում խորհրդի անդամի պաշտոն զբաղեցրած բոլոր անձանց վարձատրության վերաբերյալ տվյալները, ինչպես նաև խորհրդի նիստերին նրանց մասնակցության վերաբերյալ տվյալները:		
65.	Տարեկան հաշվետվությունը ներառում է արտաքին աուդիտն իրականացնող անձանց անունը և վարձատրությունը, ինչպես նաև նրանց անկախության փաստի ստուգման արդյունքները:	Այո	Տարեկան հաշվետվությունը ներառում է արտաքին աուդիտն իրականացնող անձի անվանումը և վարձատրությունը: Ընկերությունն արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախության ստուգման ընթացակարգ չունի, որը նախատեսում է մշակել մինչև 2014թ.-ի ավարտը:
66.	Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի նկարագրությունը, այդ թվում՝ դուստր ընկերությունների, մասնաճյուղերի, մայր ընկերության, ինչպես նաև քվեարկելու իրավունք տվող բաժնետոմսերի խաչաձև տնօրինումը փոխկապակցված այլ ընկերությունների հետ:	Այո	
67.	Տարեկան հաշվետվությունը ներառում է Տնօրենի ամփոփիչ հաշվետվությունը նախորդ տարվա գործունեության վերաբերյալ, ռիսկային գործոնները, գալիք տարվա հեռանկարները, ընկերության ռազմավարությունը, տարվա ընթացքում կնքված խոշոր գործարքները, ձեռնարկատիրական գործունեության հետ կապված գլխավոր	Ոչ	Նախատեսվում է այս հարցին անդրադառնալ հետագայում:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	փոփոխությունները, բացատրություն նախորդ տարվա ցուցանիշների հետ համեմատած ֆինանսական արդյունքների կարևոր փոփոխությունների վերաբերյալ, շահույթի տեղաբաշխման և բաշխման, այդ թվում շահութաբաժինների վճարման առաջարկությունները:		
68.	Տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի անդամների, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի և գլխավոր հաշվապահի վարձատրությունը:	Ոչ	Նախատեսվում է այս հարցին անդրադառնալ հետագայում:
69.	Տարեկան հաշվետվությունը ներառում է թողարկված բաժնետոմսերի քանակը և դասը կամ դասերը, և արժեթղթերի համապատասխան դասին տիրապետող բաժնետերերի իրավունքների ամփոփումը:	Այո	
Ընկերության ինտերնետային կայքը			
70.	Ընկերությունը ունի ինտերնետային կայք, որտեղ առանձին բաժին նվիրված է կորպորատիվ կառավարմանը:	Ոչ	Ներկայումս Ընկերության ինտերնետային կայքը ԿԿ բաժին չունի: Նախատեսվում է ստեղծել մինչև 2014 ավարտը:
71.	Ընկերության ինտերնետային կայքը պետք է պարունակի վերջին 3 տարիների ԿԿ Հայտարարագրերը:	Ոչ	Ընկերությունն առաջին անգամ է կազմում ԿԿ Հայտարարագիր:
72.	Ինտերնետային կայքը, կորպորատիվ կառավարման բաժինը և այնտեղ տեղադրված փաստաթղթերը հասանելի են նաև օտար լեզվով:	Այո	Ընկերության ինտերնետային կայքը հասանելի է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզվով: Տես նաև 70 կետի մեկնաբանությունը:
73.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են ընկերության պետական	Ոչ	Տես նաև 70 կետի մեկնաբանությունը:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	գրանցման վկայականը և կանոնադրությունը՝ բոլոր գործող փոփոխություններով հանդերձ:		
74.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժինը տեղեկություններ է պարունակում խորհրդի անդամների և գործադիր մարմնի վերաբերյալ՝ ներառելով նրանց համառոտ կենսագրականները և պաշտոնի նկարագրերը:	Ոչ	Նախատեսվում է այդ փաստաթղթերի տեղադրումը դրանց մշակումից հետո: Տես նաև 70 կետի մեկնաբանությունը:
75.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են խորհրդի, խորհրդի հանձնաժողովների Կանոնակարգերը և կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը:	Ոչ	Նախատեսվում է այդ փաստաթղթերի տեղադրումը դրանց մշակումից հետո: Տես նաև 70 կետի մեկնաբանությունը:
76.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է խորհրդի տարեկան գնահատման քաղաքականությունը:	Ոչ	Նախատեսվում է այդ փաստաթղթերի տեղադրումը դրանց մշակումից հետո: Տես նաև 70 կետի մեկնաբանությունը:
77.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են նախորդ 5 տարիների ԲԸԺ-երի նիստերի արձանագրությունները:	Ոչ	Տես նաև 70 կետի մեկնաբանությունը:
78.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է հաստատված շահութաբաժինների վճարման քաղաքականությունը:	Ոչ	Նախատեսվում է այդ փաստաթղթերի տեղադրումը դրանց մշակումից հետո: Տես նաև 70 կետի մեկնաբանությունը:
79.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված Ընկերության կառուցվածքը և բաժնետոմսերի խաչաձև տնօրինումը:	Ոչ	Ընկերության կառուցվածքը տեղադրված է կայքում: Տես նաև 70 կետի մեկնաբանությունը:
80.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է Ընկերության նախորդ 3	Ոչ	Ընկերության նախորդ 3 տարիների տարեկան հաշվետվությունները: Տես նաև 70 կետի մեկնաբանությունը:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	տարիների տարեկան հաշվետվությունները:		
Վարքագծի կանոններ			
81.	Ընկերությունը ընդունել է վարքագծի կանոններ:	Ոչ	Նախատեսվում է ընդունել մինչև 2014թ.-ի ավարտը:
82.	Վարքագծի կանոնները դրույթներ են պարունակում կորպորատիվ արժեքների, գործարար վարքագծի, պետության և պաշտոնատար անձանց հետ հարաբերությունների, ինչպես նաև մրցակիցների հետ հարաբերությունների մասին:	Ոչ	Տես 81 կետի մեկնաբանությունը:
83.	Վարքագծի կանոնները դրույթներ են պարունակում «ահազանգումների», վարքագծի կանոնների խախտման, ինչպես նաև այդ խախտումների մասին հաղորդելիս գաղտնիության պահպանման մասին:	Ոչ	Տես 81 կետի մեկնաբանությունը:
84.	Ընկերությունը նշանակել է պաշտոնյա, ով պատասխանատու է վարքագծի կանոններին հետևելու մոնիթորինգի համար:	Ոչ	Տես 81 կետի մեկնաբանությունը:
Կանոնադրական կապիտալի ավելացումը			
85.	Կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ որոշումների մասին Խորհուրդը անհապաղ տեղեկացրել է բոլոր բաժնետերերին:	Այո	
Շահառուներ			
86.	Խորհուրդը սահմանել է այն շահառուների շրջանակը, որոնք համապատասխանում են ընկերության գործունեությանը, օրինական շահեր և սպասելիքներ ունեն Ընկերությունից:	Ոչ	Նախատեսվում է սահմանել մինչև 2013թ.-ի ավարտը:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
87.	Ընկերությունը ընդունել քաղաքականություն՝ միտված շահառուների շահերը և սպասելիքները հաշվի առնելուն:	Ոչ	Տես 86 կետի մեկնաբանությունը:
88.	Խորհուրդը մշակել և բացահայտել է շահառուների հետ հարաբերությունների հաստատման քաղաքականությունը և ընթացակարգերը և տարեկան կտրվածքով բացահայտում է դրանց իրականացումը:	Ոչ	Տես 86 կետի մեկնաբանությունը:
89.	Շահառուների համար հասանելի են ընկերության ինտերնետային կայքի՝ տարեկան հաշվետվություններին և կորպորատիվ կառավարմանը վերաբերվող բաժինները:	Ոչ	Տարեկան հաշվետվություններին վերաբերող տեղեկությունները հասանելի են շահառուներին: Ընկերության ինտերնետային կայքը դեռևս կորպորատիվ կառավարման վերաբերյալ բաժին չունի, որը նախատեսվում է ձևավորել մինչև 2013թ.-ի ավարտը: